# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

## ՀԶՀ-ԲԸԱՀԾՁԲ-16/13 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԱՌԱՆՑ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՆԱԽԱՊԵՍ ՀՐԱՊԱՐԱԿԵԼՈՒ ԲԱՆԱԿՑԱՅԻՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

Քաղ. Երևան «07» հունիսի 2016 թ.

2016թ-ի հունիսի 07-ին՝ ժամը 11:00-ին, Հայաստանի զարգացման հիմնադրամի գրասենյակում՝ ՀՀ, ք. Երևան, Մ. Մկրտչյան 5 հասցեում, տեղի ունեցավ ՀԶՀ-ԲԸԱՀԾՁԲ-16/13 ծածկագրով առանց գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու բանակցային ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ հանձնաժողով) նիստը: Հանձնաժողովի նիստին մասնակցում էին հանձնաժողովի հետևյալ անդամները՝

| | | |
|---|---|---|
| Լիլիթ | Գինոսյան | Հայաստանի զարգացման հիմնադրամի գործերի կառավարման բաժնի իրավաբան – նախագահ. |
| Արմինե | Ռևազյանը | Հայաստանի զարգացման հիմնադրամի գործերի կառավարման բաժնի միջոցառումների կազմակերպման մասնագետ – անդամ. |

Հանձնաժողովի նիստին ներկա էր՝

| | | |
|---|---|---|
| Անի | Բազեյանը | Հայաստանի զարգացման հիմնադրամի գործերի կառավարման բաժնի գնումների մասնագետ: |

Հաշվի առնելով, որ հանձնաժողովի կազմը բաղկացած է երեք անդամից, իսկ հանձնաժողովի նիստին մասնակցում էին հանձնաժողովի երկու անդամները, հետևաբար՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի N 168-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 29-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն, հանձնաժողովի նիստը համարվեց իրավազոր և հայտարարվեց բացված:

Հանձնաժողովի նիստը նախագահում էր Լիլիթ Գինոսյանը, իսկ քարտուղարն էր՝ Անի Բազեյանը:

## ՕՐԱԿԱՐԳ

1. ՀՋՀ-ԲԸԱՀԾՁԲ-16/13 ծածկագրով առանց գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու բանակցային ընթացակարգին մասնակցելու հայտ ներկայացրած անձի և վերջինիս կողմից ներկայացված հայտի գնահատման մասին:
2. Մասնակցի կողմից առաջարկված գների, բանակցությունների արդյունքների, առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներ որոշելու մասին:
3. Առանց գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու բանակցային ընթացակարգի ընտրված մասնակից հայտարարելու մասին:
4. Պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը հաստատելու մասին:
5. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրվա և ժամի մասին:

## 1. ՀՋՀ-ԲԸԱՀԾՁԲ-16/13 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԱՌԱՆՑ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՆԱԽԱՊԵՍ ՀՐԱՊԱՐԱԿԵԼՈՒ ԲԱՆԱԿՑԱՅԻՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ՀԱՅՏ ՆԵՐԿԱՅԱՑՐԱԾ ԱՆՁԻ ԵՎ ՎԵՐՋԻՆԻՍ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՀԱՅՏԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովի նախագահ Լիլիթ Գինոսյանը նշեց, որ գնման առարկայի 1-ին չափաբաժնի ընդհանուր (նախահաշվային) գինը կազմում է 2 500 000 ՀՀ դրամ, 2-րդ չափաբաժնինը՝ 2 400 000 ՀՀ դրամ, 3-րդ չափաբաժնինը՝ 1 150 000 ՀՀ դրամ:

Հանձնաժողովի քարտուղար Անի Բազեյանը հայտնեց, որ՝

• ՀՋՀ-ԲԸԱՀԾՁԲ-16/13 ծածկագրով առանց գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու բանակցային ընթացակարգին մասնակցելու հայտ է ներկայացրել հետևյալ անձը (այսուհետ՝ նաև մասնակիցը).

| Հ/հ | Մասնակցի անվանում | Մասնակցի գտնվելու վայրը |
|---|---|---|
| 1. | «ԱՎԻԱՏՈՒՐ ԳՐՈՒՊ» ՍՊԸ | ՀՀ, ք. Երևան, Թումանյան 2/1 |

Հանձնաժողովն արձանագրեց, որ՝

• Մասնակիցը հայտը պարունակող ծրարը կազմել և ներկայացրել է ՀՋՀ-ԲԸԱՀԾՁԲ-16/13 ծածկագրով առանց գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու բանակցային ընթացակարգի (այսուհետ՝ ընթացակարգ) հրավերի (այսուհետ՝ հրավեր) պահանջներին համապատասխան.

• Մասնակցի կողմից ներկայացված հայտում առկա են հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը.

• Մասնակցի կողմից ներկայացված հայտում ներառված փաստաթղթերը համապատասխանում են հրավերով սահմանված վավերապայմաններին.

Որոշվեց՝

1. Լիլիթ Գինոսյանի և Անի Բազեյանի կողմից ներկայացված տեղեկատվությունն ընդունել ի գիտություն.
2. Մասնակցի կողմից ներկայացված հայտը գնահատել բավարար:

Կողմ՝ 2
Դեմ՝ 0

## 2. ՄԱՍՆԱԿՑԻ ԿՈՂՄԻՑ ԱՌԱՋԱՐԿՎԱԾ ԳՆԵՐԻ, ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ, ԱՌԱՋԻՆ ԵՎ ՀԱՋՈՐԴԱԲԱՐ ՏԵՂԵՐ ՁԲԱՂԵՑՐԱԾ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐ ՈՐՈՇԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովն արձանագրեց, որ մասնակիցները ներկայացրել են հետևյալ գները՝ առանց ԱԱՀ.

| Չափա-բաժնի համարը | Ծառայության անվանումը | Մասնակցի անվանումները և առաջարկած գները՝ (ՀՀ դրամ) |
|---|---|---|
| | | «ԱՎԻԱՏՈՒՐ ԳՐՈՒՊ» ՍՊԸ |
| 1. | Կանոնավոր օդային փոխադրման (ավիատոմս) ծառայություն | 2 356 000 |

| | | |
|---|---|---|
| 2. | Կանոնավոր օդային փոխադրման (ավիատոմս) ծառայություն | 2 279 300 |
| 3. | Կանոնավոր օդային փոխադրման (ավիատոմս) ծառայություն | 1 087 800 |

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի № 168-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 74-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությունը՝ մասնակցի հետ վարվեցին միաժամանակյա բանակցություններ՝ ներկայացված գների իջեցման նպատակով:

Բանակցությունների արդյունքում «ԱՎԻԱՏՈՒՐ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի առաջարկած վեջնական գները սահմանվեցին համապատասխանաբար 2 310 000, 2 210 000 և 1 067 000 ՀՀ դրամ:

Որոշվեց՝

1. Որպես ընթացակարգի 1-ին, 2-րդ և 3-րդ չափաբաժինների մասով առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել «ԱՎԻԱՏՈՒՐ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ին:

Կողմ՝ 2
Դեմ՝ 0

## 3. ԱՌԱՆՑ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՆԱԽԱՊԵՍ ՀՐԱՊԱՐԱԿԵԼՈՒ ԲԱՆԱԿՑԱՅԻՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԸՆՏՐՎԱԾ ՄԱՍՆԱԿԻՑ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի № 168-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 74-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությունը՝

Որոշվեց՝

1. Որպես ընթացակարգի 1-ին, 2-րդ և 3-րդ չափաբաժինների մասով ընտրված մասնակից հայտարարել «ԱՎԻԱՏՈՒՐ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ին:

Կողմ՝ 2
Դեմ՝ 0

## 4. ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՏԵՔՍՏԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովի քարտուղար Անի Բազեյանը ներկայացրեց պայմանգիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստի նախագիծը:

Որոշվեց՝

1. Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը՝ համաձայն N 1 հավելվածի:

Կողմ՝ 2
Դեմ՝ 0

## 5. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրվա և ժամի մասին

Որոշվեց՝

1. Հանձնաժողովի հաջորդ նիստը անցկացնել պայմանագրեր կնքվելու, իսկ պայմանագրեր չկնքվելու դեպքում, այդ հանգամանքը հայտնի դառնալու օրվան հաջորդող օրացուցային օրը՝ ժամը 14:30-ին:

Կողմ՝ 2
Դեմ՝ 0

Հանձնաժողովի նախագահ՝

Լ. Գինոսյան _____

Հանձնաժողովի անդամ՝

Ա. Ռևազյան _____

Հանձնաժողովի քարտուղար՝

Ա. Բազեյան _____